



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2020թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

15.06.2020թ.

ՕՐԱԿԱՐԳ

1. Տարեկան հաշվետվությունների ներկայացման մասին
2. 2019թ. ընկերության ֆինանսական գործունեության վերաբերյալ Աուդիտորի եզրակացության ներկայացման մասին
3. Տարեկան հաշվետվություններում արտացոլված տվյալների արժանահավատության վերաբերյալ վերստուգող հանձնաժողովի եզրակացության ներկայացման մասին
4. Ընկերության 2020թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության հաստատման մասին
5. Տարեկան ֆինանսական հաշվետվությունների հաստատման մասին
6. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ 2019 թվականի գործունեության արդյունքներով շահույթի Բաշխման համամասնությունների հաստատման մասին
7. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ 2019 թվականի գործունեության արդյունքներով տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի հաստատման մասին
8. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհրդի ընտրության մասին
9. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ վերստուգող հանձնաժողովի ընտրության մասին
10. «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ հաշվիչ հանձնաժողովի ընտրության մասին



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2020թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

15.06.2020թ.

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն

Հազար դրամ	Ծնթ.	2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ
Ակտիվներ			
<i>Ոչ ընթացիկ ակտիվներ</i>			
Հիմնական միջոցներ	4	22,200,344	21,236,867
Հետաձգված հարկային ակտիվներ	5	4,981	2,632
Տրված կանխավճարներ	6	289,170	3,500
		22,494,495	21,242,999
<i>Ընթացիկ ակտիվներ</i>			
Պաշարներ	7	55,839	60,452
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	8	499,444	780,844
Դրամական միջոցներ և համարժեքներ	9	169,978	147,757
		725,261	989,053
Ընդամենը ակտիվներ		23,219,756	22,232,052
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
<i>Կապիտալ և պահուստներ</i>	10		
Կանոնադրական կապիտալ		11,536,861	10,650,000
Էմիսիոն եկամուտ		501,484	457,127
Պահուստային կապիտալ		509,015	424,213
Կուտակված շահույթ		3,340,398	3,507,763
		15,887,758	15,039,103
<i>Ոչ ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	11	7,086,373	6,431,993
		7,086,373	6,431,993
<i>Ընթացիկ պարտավորություններ</i>			
Վարկեր և փոխառություններ	11	81,174	80,515
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	12	142,871	633,967
Ընթացիկ շահութահարկի գծով պարտավորություն		21,580	46,474
		245,625	760,956
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		23,219,756	22,232,052



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2020թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

15.06.2020թ.

Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն

Հազար դրամ		2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի	2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարի
	Ծնթ.		
Հասույթ	13	3,492,221	3,625,229
Ինքնարժեք	14	(1,054,560)	(879,858)
Համախառն շահույթ		2,437,661	2,745,371
Այլ եկամուտ		2,561	763
Իրացման ծախսեր		(2,938)	(2,534)
Վարչական ծախսեր	15	(412,758)	(338,527)
Այլ ծախսեր	16	(102,770)	(84,471)
Գործառնական գործունեությունից շահույթ		1,921,756	2,320,602
Այլ ֆինանսական հոդվածներ	17	59,519	105,213
Ֆինանսական եկամուտ/(ծախս) զուտ	18	(584,699)	(538,103)
Շահույթ մինչև հարկերը		1,396,576	1,887,712
Շահութահարկի գծով փոխհատուցում/(ծախս)	19	(307,639)	(191,687)
Տարվա շահույթ		1,088,937	1,696,025
<i>Այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ</i>			
Տարվա այլ համապարփակ ֆինանսական արդյունքներ հարկումից հետո		-	-
Ընդամենը տարվա համապարփակ ֆինանսական արդյունքներ		1,088,937	1,696,025



**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2020թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

15.06.2020թ.

ԱՆԿԱՆ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

«Արցախի ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության խորհրդին և ղեկավարությանը

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Արցախի ՀԷԿ» ԲԲԸ-ի (Ընկերություն) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ առ 31 դեկտեմբերի 2019թ., ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքի, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ՝ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփը:

Մեր կարծիքով, կից ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով տալիս են Ընկերության 2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքի և դրամական միջոցների հոսքերը ճշմարիտ և իրական պատկերը՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների համաձայն (ՖՀՄՄ-ներ):

Կարծիքի հիմք

Աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՄ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ *"Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար"* բաժնում: Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի Միջազգային Ստանդարտների Խորհրդի կողմից հրապարակված *"Պրոֆեսիոնալ հաշվապահների էթիկայի կանոնագրքի"* (ՀԷՄՄԽ կանոնագիրք) և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՄԽ կանոնների և Հայաստանի հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավականաչափ ու համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

Այլ հանգամանք

«Արցախի ՀԷԿ» ԲԲԸ-ի 2018 թվականի դեկտեմբերի 31-ի ֆինանսական հաշվետվությունները աուդիտի են ենթարկվել այլ աուդիտորի կողմից, ով 2019 թվականի մարտի 29-ին արտահայտել է չձևափոխված կարծիք այդ հաշվետվությունների վերաբերյալ:

Ֆինանսական հաշվետվությունների համար ղեկավարության և կառավարման լիազոր անձանց պատասխանատվությունը

Ղեկավարությունը պատասխանատվություն է կրում ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար, որոնք տալիս են ճշմարիտ և իրական պատկեր ՖՀՄՄ-ների համաձայն, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, եթե ղեկավարությունը չունի Ընկերությունը լուծարելու կամ Ընկերության գործունեությունը դադարեցնելու մտադրություն, կամ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:



Կառավարման լիազոր անձինք պատասխանատու են ֆինանսական հաշվետվողականության գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից, անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն:

Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՄ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում, և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՄ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն՝

- հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավականաչափ և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում:
- ձեռք ենք բերում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկլարացիայի կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խելամտությունը:
- եզրահանգում ենք դեկլարացիայի կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն դեպքերի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության անընդհատ գործելու կարողության վրա: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Սակայն, ապագա դեպքերը կամ իրավիճակները կարող են ստիպել Ընկերությանը դադարեցնել անընդհատության հիմունքի կիրառումը:

Կառավարման լիազոր անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք աուդիտի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

30 մարտի 2020թ.

Անիկ Մարտիրոսյան

Տնօրեն-Բաժնետեր-Աուդիտի ղեկավար



**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2020թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

15.06.2020թ.

**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ԿԱՆԾՆԱԺՈՂՈՎԻ ԵԳՐԱԿԱԳՈՒՅՈՒՆ**

Ներկայացվում է «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության Բաժնետերերի տարեկան ընդհանուր ժողովին «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվեփակված տարվա ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ:

Մենք վերստուգման ենք ենթարկել «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության ներկայացված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հաշվապահական հաշվեկշիռը, ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթները և այլ ծանոթագրություններ:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Համաձայն Միջազգային Հաշվապահական Հաշվառման Ստանդարտների ֆինանսական հաշվետվությունների կազմման և ճշգրիտ ներկայացման համար պատասխանատու է ընկերության ղեկավարությունը: Այդ պատասխանատվությունը ենթադրում է սխալների կամ խարդախությունների արդյունքում առաջացող էական թերություններից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար համապատասխան ներքին վերահսկողության համակարգի մշակում, ներդրում և կիրառում:

Վերստուգող հանձնաժողովի պատասխանատվությունը

Մեր պատասխանատվությունն է անցկացված վերստուգման արդյունքում արտահայտել կարծիք ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ: Վերստուգման աշխատանքները ներառում են այնպիսի ընթացակարգերի իրականացում, որոնք թույլ են տալիս ձեռք բերել վերստուգման ապացույցներ ֆինանսական հաշվետվություններում ներկայացված գումարների և բացահայտումների վերաբերյալ:

Եզրակացություն

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Արցախ ՀԷԿ» Բաց Բաժնետիրական Ընկերության ֆինանսական վիճակը, ինչպես նաև նրա գործունեության արդյունքներն ու դրամական միջոցների հոսքերը 2019թ. դեկտեմբերի 31-ի ավարտական տարվա համար:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ

Վերստուգող հանձնաժողովի նախագահ

Ա. Պետրոսյան

06.04.2020թ.



**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2020թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

15.06.2020թ.

2020թ. ֆինանսական գործունեության աուդիտորական կազմակերպության հաստատում

2020թ. մարտի 23-ին տեղի ունեցավ «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ 2020 թվականի տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության համար ստեղծված մրցութային հանձնաժողովի նիստ:

Մրցութային մասնակցելու համար ստացվել է մեկ հայտ՝ «Ֆոր ԷՅ Քնսալթինգ» ՓԲԸ կողմից: Մրցութային հանձնաժողովն ուսումնասիրեց հայտն և հաստատեց, որ ընկերությունը համապատասխանում է ՀՀ ԿԲ 4/09 և «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ «Անկախ աուդիտորական կազմակերպության ընտրության իրականացվող հրապարակային մրցութի կազմակերպման մասին» կանոնակարգերի պահանջներին:

«Արցախ ՀԷԿ» ԲԲԸ տնօրենների խորհուրդը որոշեց «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության ընդհանուր տարեկան ժողովին առաջարկել «Ֆոր ԷՅ Քնսալթինգ» ՓԲԸ-ն որպես 2020թ. տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտն իրականացնող կազմակերպություն:



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2020թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

15.06.2020թ

2019 թվականի ֆինանսատնտեսական արդյունքներով շահույթների և վնասների բաշխում

Հազ. ՀՀ դրամ

Գլխավոր պահուստին ուղղել	54 447
Կուտակված շահույթին ուղղել	1 034 490



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2020թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

15.06.2020թ

Շահութաբաժինների չափի և վճարման կարգի հաստատում

Ընկերության բաժնետերերին վճարել շահութաբաժիններ՝ 1 բաժնետոմսի դիմաց 90(իննսուն) ՀՀ դրամ հաշվարկով: Ընդամենը շահաբաժինների վճարմանն ընկերության կուտակված շահույթից ուղղել 1 038 317 490 ՀՀ դրամ:



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2020թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

15.06.2020թ.

ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԿԱԶՄԸ

ԱՐՏԱԿ ԲԱԼԱՅԱՆ Ծնվել է 1976թ. ք. Ստեփանակերտում: 2017թ.-ի հունիսի 8-ից առ այսօր զբաղեցնում է «Արցախբանկ» ՓԲԸ Գործադիր տնօրեն- Վարչության նախագահի պաշտոնը: Որպես «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամ առաջադրվում է առաջին անգամ:

ՐԱՖԻԻ ԲԱԼՅՈՉՅԱՆ Ծնվել է 1983 թ. Ֆրանսիայում: Աշխատում է որպես Վարկային վերլուծաբան: «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամ է 2012թ.-ից առ այսօր:

ՀԱՅԿ ԲՈՅԱԶՅԱՆ Ծնվել է 1979թ. Հայաստանի Հանրապետությունում: Աշխատում է «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությունում, որպես պորտֆելի ավագ կառավարիչ: «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամ է 2013թ.-ից առ այսօր:

ԱՐԱ ՂՈՆՅԱՆ Ծնվել է 1977թ. Հայաստանի Հանրապետությունում: Զբաղեցնում է «Զանգեզուրի Պղնձամուլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության Իրավապայմանագրային Ծառայության պետի պաշտոնը: «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամ է 2013թ.-ից առ այսօր:

ՎԼԱԴԻՄԻՐ ՇԵԿՈՅԱՆ Ծնվել է 1965թ. Հայաստանի Հանրապետությունում: Աշխատում է որպես Միջազգային ֆինանսական խորհրդատու: «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամ է 2017թ.-ից առ այսօր:

ՄԵՆՈՒԱ ՄԿՐՏՉՅԱՆ Ծնվել է 1984թ. Հայաստանի Հանրապետությունում: Զբաղեցնում է Ռեսուրսային գլխավոր տնօրենի տեղակալի պաշտոնը, հանդիսանում է Ռեսուրսային բժշկական բլոկի ֆինանսական տնօրեն: «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամ է 2018թ.-ից առ այսօր:

ՍԱՐԳԻՍ ԳՐԻԳՈՐՅԱՆ Ծնվել է 1977թ. ք. Հայաստանի Հանրապետությունում: Հանդիսանում է «ԶԻ ՓԱՐԹՆԵՐՍ» իրավաբանական ընկերության հիմնադիր / գործընկեր: «Արցախ ՀԷԿ» բաց բաժնետիրական ընկերության խորհրդի անդամ է 2019թ.-ից առ այսօր:



**«ԱՐՑԱՆ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2020թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

15.06.2020թ.

ՎԵՐՍՏՈՒԳՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Բազիկյան Արսեն Վահագնի – ծնվել է 1974թ.: Հանդիսանում է «Արմենիան Լիզինգ Քամփնի» ՈՒՎԿ ՓԲԸ տնօրեն, խորհրդի անդամ:
2. Պետրոսյան Արթուր Շահենի – ծնվել է 1977թ.: Մինչև 2018թ. աշխատում էր ԱՀ կառավարությունում որպես աշխատակազմի ղեկավար, նախարարի տեղակալ:
3. Խաչատրյան Գեղամ Յուրիի– ծնվել է 1981թ.: Աշխատում է «Արցախբանկ» ՓԲԸ- ում որպես Վարկային կոմիտեի աշխատանքներին աջակցման և վարկային վերլուծությունների բաժնի պետ:



**«ԱՐՑԱԽ ՀԷԿ» ԲԱՑ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
2020թ. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎ**

15.06.2020թ.

ՀԱՇՎԻՉ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ

1. Հովհաննիսյան Ժան Ռուդիկի (Հաշվիչ հանձնաժողովի նախագահ) – ծնվել է 1980թ.:
Աշխատում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ում, որպես ֆինանսական տնօրեն:
2. Շախունց Նանար Արամի (Հաշվիչ հանձնաժողովի անդամ) – ծնվել է 1985թ.:
Աշխատում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ում որպես ընդհանուր բաժնի պետ:
3. Սարգսյան Մանյա Ալեքսեյի (Հաշվիչ հանձնաժողովի անդամ) – ծնվել է 1988թ.:
Աշխատում է «Արցախ ՀԷԿ» ԲԲԸ-ում որպես ֆինանսատնտեսական բաժնի պետ: